Ահա բաղիլիկաներից տարբեր ոճի տաճարների մի ստուար խումբ, որոնք գեղարուեստական բարձր կատարելութեան են հասած, եւ ուրեմն, դարերի նախապատմութիւն ունին, մանաւանդ, որ մենք ցոյց պիտի



Պատկ· 16

տանք, թէ գմբեթարդ շէնքը Ե· դարում շատ ընտանի էր Հայաստանում: Աւելացնենք, որ Արծափը Զոլխախմէի տիպի կամ ութ անկիւնանի (octogon) մի շէնք է, հանգուցեալ Գիւտ եպիսկոպոսի բերանացի մեզ հաղորդած տեղեկութիւններից դատելով, իսկ Ուրդայ եկեղեցին (այժմ Իրանչալան կոչուած), եթէ ձորի գմբեթաւոր հին մատուռը չէ, գիւղից բարձր աւերակների տեղում պիտի լինէր: Դատուանի, հին Բագարանի եւ Արտաւազդայ ապարանից շէնքերի մասին տեղեկութիւն չունինք: Ուրեմն Թղթոց գրքի վաւերականի ցանկով ունինք առ նուազն երկու տարբեր ոճի եկեղեցիներ բարձր կատարելութեամբ: